

Թունաքիմիկատները նյութեր կամ խառնուրդներ են, որոնք օգտագործվում են վասաստուների դեմ պայքարի նպատակով՝ մարդկանց, բույսերի, մշակաբույսերի, անասունների կամ նյութերի պաշտպանության համար: Բարձր վտանգավորության թունաքիմիկատները (ԲՎԹ-ներ) թունաքիմիկատների հատուկ խումբ են, որոնց հետ պետք է այլ կերպ վարվել, քան մյուս թունաքիմիկատների՝ իրենց ապացուցված բարձր թունունակության կամ միջազգային կոնվենցիայում ներառված լինելու պատճառով: Թունաքիմիկատների ազդեցության ռիսկերը սովորաբար կառավարվում են ռիսկերի նվազեցման մի շարք միջոցառումներով, ներառյալ քաղաքականությամբ, ցուցանակներով (օրինակ՝ թունաքիմիկատով մշակված դաշտերում), պիտակավորմամբ, արտադրանքի բաղադրությամբ, սարքավորումների տեսակով և անհատական պաշտպանության միջոցների կրումով: Սակայն ԲՎԹ-ները չափազանց վտանգավոր են, որպեսզի ռիսկի նվազեցման սովորական միջոցառումները լինեն ադյունավետ, հատկապես ցածր և միջին եկամուտ ունեցող երկրներում (ՑՄԵԵ): ԲՎԹ-ները թունաքիմիկատներ են, որոնք, համաձայն ճանաչված միջազգային դասակարգման համակարգերի, ինչպիսիք են Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) դասակարգումը կամ Քիմիական նյութերի դասակարգման և պիտակավորման գլոբալ ներդաշնակեցման համակարգը (ԳՆՀ), կամ համաձայն համապատասխան պարտադիր միջազգային պայմանագրերի կամ կոնվենցիաների ցանկերի՝ ընդունված է համարել առողջության կամ շրջակա միջավայրի համար վտանգի հատկապես բարձր մակարդակ ներկայացնող նյութեր:



### Հիմնական հարցերը

Քիմիական նյութերի վերաբերյալ գլոբալ շրջանակային ծրագրի (ՔՆԳՇԾ) ազգային համակարգողներն առանցքային դեր են կատարում ԲՎԹ-ների հետ կապված առողջապահական և բնապահպանական ռիսկերի նվազեցման գործում՝

- ապահովելով բոլոր համապատասխան շահագրգիռ կողմերի համար ԲՎԹ-ների մասին տեղեկատվության բացահայտումը՝ կայացնելու համար ռիսկերի նվազեցման նպատակով արդյունավետ և տեղեկացված որոշումներ,
- տեղեկացնելով քաղաքականություն մշակողներին առ այն, թե ազգային մակարդակում օգտագործվող որ ԲՎԹ-ներն են արգելված բարձր եկամուտ ունեցող երկրներում,
- խրախուսելով ազգային համակարգերի զարգացումը, ինչպիսիք են թունաբանական կենտրոնները՝ նպատակային հետազոտություններ անցկացնելու, թունաքիմիկատների օգտագործման ռեգիստրներ ստեղծելու և թունաքիմիկատների հետ կապված առողջության և

շրջակա միջավայրի վերաբերյալ տվյալներ հավաքագրելու համար,

- փոխանակելով տեղեկատվությունն ազգային շահագրգիռ կողմերի հետ՝ Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ), ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի (ՄԱՇՄՕ) և ԱՀԿ-ի՝ ԲՎԹ-ների հետ կապված աշխատանքի վերաբերյալ,
- ստանձնելով ԲՎԹ-ների հարցում ազգային շահագրգիռ կողմերի ներգրավվածության խթանման և աջակցության դերը,
- խթանելով Քիմիկատների դասակարգման և պիտակավորման գլոբալ ներդաշնակեցված համակարգը (ԳՆՀ)՝ ԲՎԹ-ների նույնականացման և համապատասխան տեղեկատվության փոխանակման համար՝ ի աջակցությունն ազգային մակարդակով ԳՆՀ-ի իրականացման:



## Հիմնախնդիրը

ԲՎԹ-ները վտանգավոր են մարդու առողջության, կենդանիների և շրջակա միջավայրի համար: Դրանք կարող են օժտված լինել սուր թունունակությամբ: ԲՎԹ-ները կարող են նաև հանգեցնել երկարաժամկետ և անդառնալի վնասների, այդ թվում՝ քաղցկեղի, անպտղաբերության կամ վիժման (պտղի/կենդանու), հորմոնային համակարգի գործառույթի խաթարման, օզոնային շերտի քայքայման, ջրի և հողի աղտոտման և կենսաբազմազանության կորստի: Շատ երկրներում ԲՎԹ-ների փացորդային քանակները հայտնաբերվում են սննդամթերքներում՝ վտանգի տակ դնելով սպառողների առողջությունը: ԲՎԹ-ները կարող են նաև վնասել ոչ թիրախային օրգանիզմներին, ինչպիսիք են մարդիկ, կենդանիները, բույսերը, սնկերը և միկրոօրգանիզմները:

ԲՎԹ-ները հատկապես վտանգավոր են ֆերմերների և այդ նյութերի հետ աշխատողների համար: Շատ դեպքերում ֆերմերները չեն կարողանում բավարարել ԲՎԹ-ների օգտագործման անվտանգության պահանջները՝ կլիմայական պայմանների, ռիսկերի մասին տեղեկատվության բացակայության և անհրաժեշտ անվտանգության սարքավորումների անհասանելիության պատճառով: Ամեն տարի գյուղատնտեսության ոլորտում տեղի է ունենում թունաքիմիկատներով մոտ 400 մլն մասնագիտական թունավորում՝ առնվազն 10 000 մահով, անհայտ թվով երկարաժամկետ հետևանքներով և թունաքիմիկատների հետ կապված ավելի քան 150000 ինքնասպանությամբ: Թունաքիմիկատներով թունավորումների ավելի քան 95%-ը տեղի է ունենում ցածր և միջին եկամուտ ունեցող երկրներում, մինչդեռ ԲՎԹ-ների մեծ մասը չի արտադրվում այդ երկրներում: Թունաքիմիկատների միայն մեկ փոքր խումբ, այն է՝ ԲՎԹ-ները, պատասխանատու են թունավորման դեպքերի մեծ մասի համար:



## Վտանգի և ռիսկի տարբերությունը

ԲՎԹ-ները քննարկելիս կարևոր է հասկանալ վտանգի և ռիսկի տարբերությունը: Վտանգը թունաքիմիկատին ներհատուկ թունունակությունն է: Բոլոր թունաքիմիկատները թունունակ են, ինչի շնորհիվ դրանք ոչնչացնում կամ վանում են փասսատուներին, սնկերին, միջատներին կամ մոլախոտերը՝ հանգամանքներից կախված: Դրանք տարբերվում են իրենց թունունակությամբ և գործողության մեխանիզմով:

Առողջապահական վտանգներն առաջանում են թունաքիմիկատների ազդեցությանը ենթարկվելու դեպքում, օրինակ, մաշկի ախտահարումը՝ որպես առանց պաշտպանիչ միջոցների (դիմակ, ձեռնոցներ) սրսկումներ կատարելու հետևանք, գոլորշիները շնչելը կամ թունաքիմիկատների փսացորդները սննդի հետ կուլ տալը: Մարդիկ թունաքիմիկատները նաև դիտավորյալ օգտագործում են ինքնափասսման համար: Աշխարհում բոլոր ինքնասպանությունների մոտավորապես 20%-ը տեղի է ունենում թունաքիմիկատներով ինքնաթունավորումից:



## ԲՎԹ-ների լայն կիրառությունը

ԲՎԹ-ներն ամբողջ աշխարհում օգտագործվում են տարբեր պատճառներով և կիրառություններով: Օգտագործման օրինակները ներառում են հետևյալը՝ կախված նրանից, թե ինչպես են երկրներն օրենսդրորեն ընդունել և սահմանել թունաքիմիկատները (օրինակ՝ բիոցիդներ կամ թունաքիմիկատներ, որոնք չեն օգտագործվում գյուղատնտեսության ոլորտում)։

- հանրային առողջապահության ոլորտում (օրինակ՝ միջատասպան նյութերն, ինչպիսին է ԴԴՏ-ն, կենցաղային թունաքիմիկատները, ռոդենտիցիդներն, ախտահանիչները, ինչպիսին է, օրինակ, ֆորմալդեհիդը),
- գյուղատնտեսության ոլորտում՝ բույսերի պաշտպանության միջոցներ՝ միզրացիա կատարող փասսատուների (մորելիս, աշնանացանի բվիկ և այլն) դեմ պայքարի ծրագրերում,
- նավակների բուսապատման դեմ օգտագործվող ներկերում,
- նյութերի համար պահպանիչներում (կոնսերվանտներ), օրինակ՝ փայտի կոնսերվանտներ, ինչպիսին է կրեոզոտը, ներկերի կամ շինանյութերի կոնսերվանտները,
- ախտահանող միջոցներում (օրինակ՝ խմելու ջրի վարակազերծման համար, առողջապահությունում, գյուղատնտեսությունում, տնային տնտեսությունում):

Հայաստանի գյուղատնտեսությունում ԲՎԹ-ները կիրառվում են տարբեր մշակաբույսերի փասսատուների ոչնչացման համար: Վերլուծությունը ցույց է տվել, որ ԲՎԹ-ները կարող են օգտագործվել հանրապետության մոտ 33 մշակաբույսի փասսատուների դեմ՝ որպես ինսեկտիցիդներ, հերբիցիդներ, ֆունգիցիդներ, սկարիցիդներ, միտիցիդներ

կամ ռոդենտիցիդներ: ԲՎԹ-ների 78 ակտիվ բաղադրիչ հաստատված են Հայաստանում բանջարաբուստանային մշակաբույսերի փասսատուների դեմ պայքարելու համար: Բոլոր ԲՎԹ-ներից 14 ակտիվ բաղադրիչ օգտագործվում են ծաղիկների ենթասեկտորում, 15-ը հիմնականում հերբիցիդներ են, որոնք օգտագործվում են հացահատիկային մշակաբույսերի փասսատուների դեմ, 43-ն օգտագործվում են խաղողի այգիներում՝ խմիչքների արտադրության համար, 54-ը՝ պտղատու մշակաբույսերի փասսատուների դեմ պայքարելու համար:

Համաձայն Հայաստանում գրանցված թունաքիմիկատների ցանկի՝ ԲՎԹ-ներին պատկանող և Հայաստանում օգտագործման համար գրանցված 95 ակտիվ բաղադրիչի ընդհանուր ցանկից 48 (50,5%) ակտիվ բաղադրիչ արգելված են կամ հաստատված չեն այլ երկրներում օգտագործման համար:

Ստոկհոլմի կոնվենցիայով արգելման ենթակա լավագույն թեկնածուների ցանկը ներառում է քլորպիրիֆոսը, որը հայտնի է երեխաների ուղեղի զարգացման վրա իր փասսակար ազդեցությամբ, ացետոքլորը և լյամբդա-ցիհալոտրինը:

Հայաստանում թույլատրված ԲՎԹ-ների 95 ակտիվ բաղադրիչի վերլուծությունը ցույց է տվել, որ թույլատրված պատրաստուկների ցանկից 23 ակտիվ բաղադրիչ պատկանում են վտանգավորության 1-ին խմբին՝ սուր թունունակություն՝ ԱՀԿ 1ա, 1բ, H330, և 1,2 և 1,3 համակցություններին: 49 ակտիվ բաղադրիչ պատկանում են 2-րդ խմբին՝ երկարատև ազդեցություններ, վերարտադրողական համակարգի վրա ազդող թունունակ նյութեր, քաղցկեղածիններ, հնարավոր քաղցկեղածիններ, մուտագեններ, և 2,3 և 1,2,3 համակցություններին: 52 ակտիվ բաղադրիչ պատկանում են 3-րդ խմբին և համակցություններին ըստ խմբերի՝ թունավոր են շրջակա միջավայրի համար և, մասնավորապես, խիստ թունավոր՝ մեղուների համար: 2 ակտիվ բաղադրիչ պատկանում են 4-րդ խմբին, որոնք արգելված են այլ կոնվենցիաներով:



## Այլընտրանքներ

ԲՎԹ-ների այլընտրանքներ ունենալն առանցքային է դրանց փուլային դուրսբերման համար: Այլընտրանքները կարող են ներառել քիմիական փոխարինիչներ, ինչպես նաև բիոպեստիցիդներ, կանխարգելիչ միջոցներ (օրինակ՝ միջատացանցեր) կամ ոչ քիմիական այլընտրանքներ, օրինակ՝ թակարդներ և հատուկ մեթոդներ, ինչպիսիք են ագրոէկոլոգիան, փասսակար օրգանիզմների դեմ ինտեգրացված պայքարը, հիվանդությունները փոխանցողների (վեկտորներ) դեմ ինտեգրացված պայքարը: Լավագույն հարմար այլընտրանքները կախված կլինեն այն փասսատուից, որի դեմ հարկավոր է պայքարել և այն վայրից, որտեղ պետք է իրականացվեն պայքարի միջոցառումները:

ՔՆԳՇԾ-ի ազգային համակարգողները պետք է նպաստեն իրենց երկրներում հարմար այլընտրանքների գրանցմանը և հասանելիությանը: Հավասարապես կարևոր է բարձրացնել իրազեկվածությունը ԲՎԹ-ների ռիսկերի մասին և խթանել ցածր թունունակ այլընտրանքների մշակումը, ներառյալ ագրոէկոլոգիական մոտեցումները, որոնք նվազեցնում են թունաքիմիկատներից կախվածությունը: Սա նշանակում է հավաքագրել և փոխանակել ԲՎԹ-ների կենսունակ այլընտրանքների, ներառյալ մշակութային և բնապահպանական կառավարման միջոցառումների, ոչ քիմիական կամ կենսաբանական պայքարի մեթոդների, բիոպեստիցիդների կամ պակաս վտանգավոր թունաքիմիկատների մասին տեղեկատվությունը: Մի քանի կազմակերպություններ հասանելի են՝ ՔՆԳՇԾ-ի ազգային համակարգողներին այլընտրանքային տարբերակների խրախուսման և իրազեկվածության բարձրացման գործում աջակցելու համար: Դրանք են Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը, ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագիրը և Պեստիցիդների դեմ գործողությունների ցանցը:

Քիմիական փոխարինիչներ օգտագործելու դեպքում երկրները պետք է երաշխավորեն, որ դրանք չեն ցուցադրի այնպիսի հատկություններ, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ և հանգեցնել, այսպես կոչված, ափսոսալի փոխարինման:

### *ԲՎԹ-ների նկատմամբ գործողություններ ձեռնարկելու անհրաժեշտությունը ճանաչված է*

Մինչ տասնյակ ավելի հին ու փաստակար թունաքիմիկատներ, ինչպիսիք են ԴԴՏ-ն և լինդանը, արգելվել կամ խիստ սահմանափակվել են, շատ վտանգավոր նյութեր շարունակում են լայն կիրառություն ունենալ:

2006թ.-ին ՄԱԿ-ի ՊԳԿ-ն և ԱՀԿ-ն ուշադրությունը հրավիրեցին թունավորման դեպքերի և թունաքիմիկատների հետ կապված առողջապահական և բնապահպանական փաստների շարունակական խնդիրների վրա, հատկապես զարգացող երկրներում՝ չնայած կառավարության կողմից վերահսկողությանը և ագրոքիմիական արդյունաբերության ջանքերին՝ ուղղված ռիսկային գործելակերպից խուսափելուն և այսպես կոչված «անվտանգ օգտագործման» խթանմանը: Ի պատասխան՝ ՄԱԿ-ի քաղաքականությունն մշակողները կոչ արեցին համակարգված գործողություններ ձեռնարկել բարձր վտանգավորության թունաքիմիկատների նկատմամբ՝ ներառյալ ազդեցությունը և ռիսկերը նվազեցնելու ուղիները, ինչպես նաև հետագա արգելքները: 2016 թ.-ին ՊԳԿ-ն և ԱՀԿ-ն հրապարակեցին իրենց ուղեցույցները բարձր վտանգավորության թունաքիմիկատների վերաբերյալ՝ համաձայն Թունաքիմիկատների կառավարման միջազգային վարքագծի կանոնագրի:

Նաև 2006թ.-ին «Քիմիական նյութերի միջազգային կառավարման ռազմավարական մոտեցում» գործընթացը (ՔՆՄԿՌՄ) հիմք նախապատրաստեց ընդհանուր քիմիական նյութերի փաստակար կողմնակի ազդեցությունների վերաբերյալ նոր համաձայնեցված գործողությունների համար:

Այս համընդհանուր ռազմավարությունը նպատակ ունի հասնել քիմիական նյութերի պատշաճ կառավարման կյանքի ողջ շրջափուլի ընթացքում: 2015թ.-ին ՔՆՄԿՌՄ-ի Քիմիական նյութերի կառավարման 4-րդ միջազգային համաժողովը (ICCM4) բարձր վտանգավորության թունաքիմիկատները ճանաչեց որպես մտահոգիչ խնդիր՝ ցածր և միջին եկամուտ ունեցող երկրների համար և կոչ արեց համաձայնեցված գործողություններ ձեռնարկել ԲՎԹ-ների հիմնախնդրի լուծման ուղղությամբ: 2017թ.-ին ՄԱԿ-ի փորձագետները կոչ արեցին համապարփակ նոր համընդհանուր պայմանագիր կնքել գյուղատնտեսությունում վտանգավոր թունաքիմիկատների օգտագործումը կարգավորելու, աստիճանաբար վերացնելու և մի քանի անգամ թարմացված ԲՎԹ-ների ցուցակն առաջ մղելու համար: Վերջին տարբերակը (2016թ. դեկտ.) ներառում է գրեթե 300 թունաքիմիկատ:

***ԲՎԹ-ների դուրսբերումն ունի տնտեսական, բնապահպանական և սոցիալական նշանակություն***

Թունաքիմիկատների հետ կապված առողջապահական խնդիրների նվազեցման անհրաժեշտությունն ակնհայտ է: ՄԱԿ-ի վերջին զեկույցը գնահատում է սուր թունավորումից տարեկան 200000 մահացության դեպք, որոնց մեծ մասը գրանցվում է զարգացող երկրներում, որտեղ առողջապահական, անվտանգության և բնապահպանական կարգավորումներն ավելի թույլ են: Թունաքիմիկատների ազդեցության նկատմամբ հատկապես խոցելի են ֆերմերները և գյուղատնտեսության աշխատողները, պլանտացիաների մոտ ապրող համայնքները, հղի կանայք և երեխաները, հետևաբար, վերջիններս հատուկ պաշտպանության կարիք ունեն: Ուղղակիորեն կամ աղտոտված սննդի և խմիչքի միջոցով թունաքիմիկատների ազդեցության հետ կապված քրոնիկական բնույթի առողջական խնդիրների մակարդակի վերաբերյալ կան սակավ տվյալներ, սակայն գոյություն ունեն հավաստի գիտական ապացույցներ առ այն, որ որոշ քաղցկեղներ, հորմոնային և նյարդաբանական խանգարումներ, ինչպիսիք են Պարկինսոնի հիվանդությունը, կարող են կապված լինել գյուղատնտեսությունում որոշակի թունաքիմիկատների օգտագործման հետ: Հատկապես վտանգի տակ են երեխաները, և թունաքիմիկատների նույնիսկ ամենափոքր չափաքանակի ազդեցությունը կարող է զգալի փասս պատճառել, հատկապես՝ հղիության և վաղ մանկության շրջանում: Թունաքիմիկատների ազդեցությունը նպաստում է մանկական քաղցկեղի, բնածին արատների, վաղ սեռական հասունացման, մանկական աթամայի, գիրության և շաքարախտի դեպքերի աճին, որոնք գրանցված են ԱՄՆ-ում և այլ զարգացած երկրներում: Թունաքիմիկատներից կախվածության աճն ուղեկցվում է շրջակա միջավայրի աղտոտվածության խնդիրներով, վայրի բնության, անասունների և օգտակար օրգանիզմների համար սուր կամ քրոնիկական փասսներով: Միջատասպաններով գյուղատնտեսական մակերևութային ջրերի աղտոտվածության տվյալների առաջին համաշխարհային համապարփակ գնահատումը ցույց է տվել, որ նմուշների ավելի քան 50%-ը գերազանցել է ընդունված շեմը և լուրջ վտանգ է ներկայացնում ջրային կենսաբազմազանության համար:

## Կառավարության աջակցությունն անհրաժեշտ է ԲՎԹ-ների փուլային դուրսբերման համար

Կառավարությունը պետք է լիազորի իրավասու մարմիններին՝ բացահայտելու ԲՎԹ-ները և մշակելու ազգային ռազմավարություն՝ դրանց հետ կապված խնդիրների լուծման համար, այն է՝ իրականացնել ԳՆՀ-ն թունաքիմիկատների մասով, հաղորդակցվել բոլոր վերջնական օգտագործողների (օրինակ՝ ֆերմերներ, աշխատողներ, սպառողներ) հետ՝ ԲՎԹ-ների մասին տեղեկատվություն տրամադրելու համար, ցանցային աշխատանք տանել տարածաշրջանային կազմակերպությունների հետ՝ տարածաշրջանային ռազմավարությունների մշակման և իրականացման համար, կիրարկել միջազգային այնպիսի փաստաթղթեր, ինչպիսիք են Ռոտերդամի, Ստոկհոլմի և Մոնրեալի կոնվենցիաները, ԳՆՀ-ն, ՊԳԿ/ԱՀԿ-ի Թունաքիմիկատների կառավարման միջազգային վարքագծի կանոնագիրքը և այլն:

Ազգային կառավարություններին հորդորվում է աջակցել ԲՎԹ-ների օգտագործման նկատմամբ մոտեցումներին առաջադեմ քաղաքականությունների միջոցով, ինչպիսիք են որոշակի ԲՎԹ-ների արգելքը կամ սահմանափակումը և այլընտրանքների ակտիվորեն խթանումը: ԲՎԹ-ների վերաբերյալ ՊԳԿ-ի/ԱՀԿ-ի ուղեցույցում ընդգծվում է, որ թունաքիմիկատներից կախվածության կրճատումն առաջնահերթ խնդիր է ԲՎԹ-ների հետ կապված ռիսկերի նվազեցման հարցում՝ ոչ քիմիական մեթոդներին առավելագույնս նախապատվություն տալուն զուգընթաց:

ԲՎԹ-ների մասին ուղեցույցը տալիս է քաղաքականության կամ վարչական միջոցառումների հակիրճ օրինակներ՝ աջակցելու փաստաթուղթերի դեմ պայքարի կառավարմանը, որը չի ներառում ԲՎԹ-ների օգտագործումը, օրինակ՝

- խթանել ՎԴԻՊ-ի և հիվանդությունների փոխանցողների դեմ ինտեգրացված պայքարի մեթոդները՝ վերապատրաստման, հաղորդակցության և հետագա հետազոտություններում ներդրումների կատարման և դրանց արդյունավետության մշտադիտարկման միջոցով,
- բարելավել ցածր ռիսկային կենսաբանական այլընտրանքների մատչելիությունը և բաշխումը,
- օգտագործել պատշաճ գյուղատնտեսական պրակտիկայի սխեմաներ և այլ ոչ նորմատիվ իրավական տարբերակներ՝ խթանելու ԲՎԹ-ների փոխարինումը փաստաթուղթերի դեմ պայքարի մոտեցումներով և ավելի պակաս ռիսկեր ներկայացնող արտադրանքներով,
- ուսումնասիրել ֆինանսական խթանների (օրինակ՝ սուբսիդավորման կամ հարկման գործիքների) օգտագործման հնարավորությունը՝ բարձր ռիսկային արտադրանքների փոխարեն ցածր ռիսկային արտադրանքներին, օրինակ՝ կենսաբանական պայքարի միջոցներին և բիոպեստիցիդների մեծամասնությանը նախապատվություն տալու համար:

Որոշ երկրներ սկսում են քայլեր ձեռնարկել՝ ԲՎԹ-ների խնդիրներն օրենսդրական մակարդակով և/կամ ավելի անվտանգ այլընտրանքների համար գործնական քաղաքականության աջակցությամբ լուծելու համար:

## ՀԿ-ներից պահանջվող գործողություններ

- Ուշադրություն դարձնել խոցելի բնակչության և շրջակա միջավայրի վրա ԲՎԹ-ների ազդեցությանը
- Ապահովել թիրախային լսարանի, ներառյալ ֆերմերների, աշխատողների և սպառողների հետ ռիսկերի մասին հաղորդակցությունը
- Շարունակել ներգրավված լինել բոլոր շահագրգիռ կողմերի հետ գլոբալ քննարկումներում և շարունակել բարձրացնել իրազեկությունը
- Աջակցել ԳՆՀ-ի իրականացմանը

## ՄԱԿ-ի ասամբլեան կողմ է քվեարկել աշխարհի ամենից թունունակ թունաքիմիկատների օգտագործմանը վերջ դնելու օգտին

Կատարելով պատմական քայլ, ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ասամբլեան (UNEA) 2024թ.-ի մարտի 1-ին Նայրոբիում կոչ արեց դադարեցնել աշխարհի ամենից թունունակ թունաքիմիկատների օգտագործումը մինչև 2035 թվականը: UNEA-ի «Բարձր վտանգավորության թունաքիմիկատների մասին» բանաձևը կարևոր ներդրում է բարձր վտանգավորության թունաքիմիկատների փուլային դուրսբերմանն ուղղված ազգային և բազմակողմ գործողությունների խթանման գործում:

UNEA-ի «Բարձր վտանգավորության թունաքիմիկատների մասին» բանաձևը խրախուսում է երկրներին՝ շատ կարճ ժամանակում գլոբալ մակարդակում բարձր վտանգավորության թունաքիմիկատների դեմ գործողություններ ձեռնարկել:

Երաշխավորելու համար, որ անհրաժեշտ գործողություններն արդեն ձեռնարկվել են, պետություններին առաջարկվում է մասնակցել ԲՎԹ-ների հարցերով դաշինքին: Նաև անհրաժեշտ է ֆինանսական և տեխնիկական աջակցություն ցուցաբերել ֆերմերներին և գյուղատնտեսության աշխատողներին՝ կայուն և հեռանկարային ձևով քիմիական և սինթետիկ թունաքիմիկատների օգտագործումը գյուղատնտեսական, մեխանիկական և ագրոէկոլոգիական այլընտրանքներով փոխարինելու համար:



Սույն տեղեկատվական նյութը ստեղծվել է «Գյուղի կայուն զարգացում» գյուղատնտեսական հիմնադրամի կողմից՝ «Կանաչ դրամաշնորհների» գլոբալ հիմնադրամի (GGF) ֆինանսավորմամբ իրականացվող «Բարձր վտանգավորության թունաքիմիկատների հիմնախնդրի դիտարկումը» ծրագրի շրջանակում:

«Գյուղի կայուն զարգացում» գյուղատնտեսական հիմնադրամ  
ՀՀ, ք. Երևան, Շինարարների փող. 18, բն. 52  
Էլ. փոստ՝ [info@ruraldaf.am](mailto:info@ruraldaf.am)  
Վեբ կայք՝ <http://www.ruraldaf.am>

ԵՐԵՎԱՆ 2024